

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1) Երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով համալիր ուսումնասիրում է.


- 1) երկրագրությունը
- 2) երկրաբնապահպանությունը
- 3) երկրաբանությունը
- 4) երկրաձևաբանությունը

2) Կողմնորոշված կողմնացույցի մագնիսական սլաքը հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս.

- 1) արևելյան
- 2) հարավային
- 3) արևմտյան
- 4) հյուսիսային

3) Նկար 1.- ում Ձ տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որո՞նք են:

- 1) հս. լ. 20° արլ. է. 20°
- 2) հվ. լ. 20° արլ. է. 20°
- 3) հս. լ. 20° արմ. է. 20°
- 4) հվ. լ. 20° արմ. է. 20°



4) Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) երկնքի ամպամածությունը
- 2) պասսատների առաջացումը
- 3) մուսսոնների առաջացումը
- 4) ժամերի տարբերությունը

5 Եթե տեղագրական քարտեզում հորիզոնականները խիտ դասավորություն ունեն, ապա այդ տեղամասում.

- 1) լեռնալանջը բուսագուրկ է
- 2) լեռնալանջը բացակայում է
- 3) լեռնալանջը մեղմաթեք է
- 4) լեռնալանջը զառիթափ է

6 1 : 7 000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 8 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 5600 կմ
- 2) 5,6 կմ
- 3) 56 կմ
- 4) 560 կմ

7 Բնութագրումով որոշել Երկրի շերտը.

Երկրի ամենավերին և ամենաբարակ շերտն է: Այն կազմված է համեմատաբար թեթև ապարներից: Այդ շերտն է.

- 1) վերին միջնապատյանը
- 2) Երկրի միջուկը
- 3) ստորին միջնապատյանը
- 4) երկրակեղևը

8 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գեյզերների տաք ջրերը մարդիկ օգտագործում են ջերմոցները և բնակարանները տաքացնելու համար:
- 2) Հանգած հրաբուխներ են Վեզուվը և Կրակատաուն:
- 3) Շատ գեյզերներ կան Կամչատկա թերակղզում:
- 4) Երկրի ընդերքում այն տեղը, որտեղ առաջանում են ապարաշերտերի կտրուկ տեղաշարժեր, կոչվում է երկրաշարժի օջախ:

9 Ի՞նչ գազ է արտազատվում լուսասինթեզի ժամանակ.

- 1) օզոն
- 2) ածխաթթու գազ
- 3) թթվածին
- 4) ազոտ

10 Ո՞ր գոնայում են ապրում փիղը և ընձուղտը.

- 1) խառը անտառ
- 2) անապատ
- 3) սավաննա
- 4) տափաստան

11 Գետի անկումը 800 մ է, երկարությունը՝ 200 կմ: Որքա՞ն է գետի միջին թեքությունը.

- 1) 8 մ/կմ
- 2) 2 մ/կմ
- 3) 4 մ/կմ
- 4) 6 մ/կմ

12 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 2) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 3) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:
- 4) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:

13 Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներն ու քարաքոսներ: Ո՞ր բնական զոնան է.

- 1) տայգա
- 2) սառցային
- 3) սավաննա
- 4) տունդրա

14 Տափաստանների բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում.

- 1) կարմրադեղին
- 2) սևահողերի
- 3) կարմրագորշ
- 4) դարչնագույն

15 Ո՞ր լեռն է ամենաբարձրը Անտարկտիդայում.

- 1) Վինսոն
- 2) Մոնբլան
- 3) Էլբրուս
- 4) Էրեբուս

16 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ավստրալիայում սառցադաշտեր չկան:
- 2) Մեծ ջրբաժան լեռնաշղթան ունի հրաբխային ծագում:
- 3) Մուրեյ գետը սկիզբ է առնում Էյր լճից:
- 4) Ավստրալիայի ներքին շրջաններում տեղումներն առատ են:

17

Հարավային Ամերիկայի արևմտյան ափով ո՞ր ծովային հոսանքն է անցնում:

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Պերուական
- 3) Գվիանական
- 4) Բրազիլական

18

Ընտրել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. Պատագոնիա
բ. Բրազիլական
գ. Լա Պլատայի
դ. Ամազոնի

1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ:
2. Մարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում:
3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս:
4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը:

- 1) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 2) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 2) Հյուսիսային Ամերիկան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
- 3) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:
- 4) Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:

20

Ո՞ր գույգն է սխալ.

- 1) Ֆլորիդա թերակղզի — Ֆլորիդայի նեղուց
- 2) Լաբրադոր թերակղզի — Լաբրադորի նեղուց
- 3) Կալիֆոռնիա թերակղզի — Կալիֆոռնիական ծոց
- 4) Ալյասկա թերակղզի — Ալյասկայի ծոց

21

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հասարակածային գոտում:
- 2) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
- 3) Աֆրիկայի հիմքում ընկած է Գոնդվանա հնագույն խոշոր ցամաքի մասը կազմող Աֆրիկական պլատֆորմը:
- 4) Աֆրիկայի մակերևույթում տիրապետում են սարահարթերը:

22

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 2) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
- 3) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:
- 4) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման 4 մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:

23

Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:
- 2) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:
- 3) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:
- 4) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:

24


Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձություն չէ.

- 1) Օսմանյան կայսրության փլուզումը
- 2) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 3) Ավստրո-Հունգարիայի փլուզումը
- 4) ԱՄՆ-ի կազմավորումը

25

Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.

- 1) 1000-2000 մ
- 2) մինչև 200 մ
- 3) 200-500 մ
- 4) 500-1000 մ



26

Պետության բնակչության թիվը 200 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 50 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 25%
- 2) 75%
- 3) 50%
- 4) 40%

27

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՏ-ի զարգացման փուլերից է արդյունաբերականը:
- 2) Համաշխարհային տնտեսությունն (ՀՏ) աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների փոխկապակցված ամբողջությունն է:
- 3) ՀՏ-ի տարածքային միավորները վերազգային ընկերություններն են:
- 4) ՀՏ-ն մինչև 19-րդ դարի վերջը ուներ միակենտրոն բնույթ, այժմ բազմակենտրոն է:

28


Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար աշխատողների թվով.

- 1) տեղեկատվական ոլորտը
- 2) արդյունաբերությունը
- 3) ծառայությունների ոլորտը
- 4) գյուղատնտեսությունը

29

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թեթև և սննդի արդյունաբերությունը տնտեսության նորագույն ճյուղերն են:
- 2) Համաշխարհային թեթև և սննդի արդյունաբերության հիմնական հումքային բազան գյուղատնտեսությունն է:
- 3) Թեթև և սննդի արդյունաբերության տեղաբաշխումը համատարած է, քանի որ բոլոր երկրներում էլ կա:
- 4) Թեթև և սննդի արդյունաբերությունը հիմնականում թողարկում է սպառման արտադրանք:



քարտեզ 1

30 Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Ա տառով.

- 1) Լիբիա
- 2) ՀԱՀ
- 3) Քենիա
- 4) Չադ

31 Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1-ում նշված Բ տառով.

- 1) Ռաբաթ
- 2) Ադիս Աբեբա
- 3) Կահիրե
- 4) Անտանանարիվու

32

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գերիշխող կրոն է մահմեդականությունը:
- 2) Բոլոր երկրները չունեն ելք դեպի ծով:
- 3) Բնակչության մեծ մասը խոսում է թյուրքական լեզվախմբի մեջ մտնող լեզուներով:
- 4) Բարձր է բնակչության միջին խտությունը:

33

Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բարձր է բնակչության բնական աճը:
- 2) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:
- 3) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:
- 4) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:

34

Ո՞ր մշակաբույսի աճեցմամբ է Իտալիան աշխարհում առաջատար.

- 1) ցորենի
- 2) կակաոյի
- 3) սուրճի
- 4) խաղողի

35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում չեն.

- 1) Արգենտինան և Չիլին
- 2) Կոլումբիան և Պերուն
- 3) Կանադան և Շվեդիան
- 4) Կուբան և Ուրուգվայը

36

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:
- 2) Գառան մսի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
- 3) Աշխարհում առաջատարներից է ալյումինի հումքի՝ բոքսիտների արդյունահանմամբ և արտահանմամբ:
- 4) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:

37

«Օգտակար հանածո — հանքավայր» զույգերիցընտրել սխալը.

- 1) երկաթ — Պարսից ծոց
- 2) քարածուխ — Ռուրի ավազան
- 3) պղինձ — Անդերի լեռներ
- 4) գազ — Հյուսիսային ծով

38

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ռ՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրի տարածքում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են չուվաշները:
- 2) «Ժողովրդագրական պայթյունը» կանխելու նպատակով երկիրը վարում է բնակչության աճի կրճատման ժողովրդագրական քաղաքականություն:
- 3) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:
- 4) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:

39

Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ռ՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:
- 2) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:
- 3) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 4) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է սառցե երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է գեյզերներով: Երկրաջերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և ջերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Նորվեգիան
- 2) Իռլանդիան
- 3) Ֆինլանդիան
- 4) Իսլանդիան

41


Հայկական պար լեռնաշղթայի վրա է.

- 1) Պարզ լիճը
- 2) Գայլատու լիճը
- 3) Քարի լիճը
- 4) Կապուտան լիճը

42

Ո՞ր լեռնաշղթան ՀՀ հարավում չէ:

- 1) Մեղրու
- 2) Զանգեզուրի
- 3) Վայքի
- 4) Վիրահայոց



քարտեզ 2

43 Քարտեզ 2-ում Ծաղկունյաց լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

44 Քարտեզ 2-ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Զ
- 3) Ե
- 4) Է

45

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց:
- 2) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:
- 3) Քաջարան և Ախթալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:
- 4) Մեծամորը և Ծաղկաձորը միագործառության քաղաքներ են:

46

ՀՀ ո՞ր բնակավայրը առողջարանային չէ.

- 1) Արզնին
- 2) Հանքավանը
- 3) Ագարակը
- 4) Դիլիջանը

47

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:
- 2) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 3) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:
- 4) ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կապի բաժինն է:

48

Երկաթուղային կայարաններ են.

- 1) Վայքը և Եղեգնաձորը
- 2) Գորիսը և Սիսիանը
- 3) Մարալիկը և Արթիկը
- 4) Գավառը և Մարտունին

49

Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:
- 2) Ցածրադիր գոտու ոռոգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:
- 3) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:
- 4) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:

50

Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) պանրի արտադրությունը
- 2) գինու-կոնյակի արտադրությունը
- 3) պղնձաձուլությունը
- 4) քիմիական արդյունաբերությունը

51 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 2) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 3) Ջերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 4) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:

52 Էլեկտրակայանների տեսակներից ո՞րն է ամենաշատն աղտոտում մթնոլորտը.

- 1) արևային
- 2) ջրային
- 3) ջերմային
- 4) հողմային

53 Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.

- 1) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակով
- 2) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
- 3) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
- 4) մետաղների փոխարինումը սինթետիկ նյութերով

54 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումն է, գնահատումն ու վերահսկումն է:
- 2) Անտառապատ տարածքների կրճատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:
- 3) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օղակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:
- 4) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:

55 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սովյալների և թերսնվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:
- 2) Մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչներն են երկարակեցությունը, կրթվածությունը և կենսամակարդակը:
- 3) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:
- 4) Զարգացող երկրների մեծ մասի տնտեսության մեջ գերակշռողը ծառայությունների ոլորտն է:

56

Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.

- | | |
|---------------|-----------|
| 1) Բազալտ | 5) կավիճ |
| 2) կերակրի աղ | 6) տուֆ |
| 3) կվարց | 7) գնեյս |
| 4) օբսիդիան | 8) գրանիտ |

57

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Մակենզի | 5) Կոլումբիա |
| 2) Օրինկո | 6) Օբ |
| 3) Սիրդարյա | 7) Պարանա |
| 4) Կոնգո | 8) Մեկոնգ |

58

Տրված են ծովային հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|--------------|
| 1) Գվինեական | 5) Բենգելյան |
| 2) Գվիանական | 6) Գոլֆստրիմ |
| 3) Կուրո Սիո | 7) Մոզամբիկի |
| 4) Սոմալիի | 8) Ալյասկայի |

59

Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1) հայկական | 5) թյուրքական |
| 2) սլավոնական | 6) քարթվելական |
| 3) ռոմանական | 7) իրանական |
| 4) գերմանական | 8) սեմական |

60

Գրել այն երկրների համարները, որոնք մերձծովային են.

- | | |
|------------|--------------|
| 1) Բոլիվիա | 5) Հունգարիա |
| 2) Ալժիր | 6) Շվեդիա |
| 3) Բելգիա | 7) Շվեյցարիա |
| 4) Մոլդովա | 8) Մոնղոլիա |

61

Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային չեն.

- | | |
|-------------|-------------|
| 1) Սևանի | 5) Մեծամորի |
| 2) Վանաձորի | 6) Ձորագետի |
| 3) Քանաքեռի | 7) Տաթևի |
| 4) Արզնիի | 8) Շամբի |

62

Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել դրանց հոսքի ուղղության արևմուտքից արևելք, հյուսիսից հարավ, հարավից հյուսիս հաջորդականությամբ.

1. Ախուրյան 2. Ճորոխ 3. Արաքս

63

Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության նվազման կարգով.

1. բարձրավայր 2. դաշտավայր 3. սարահարթ 4. ցածրավայր

64

Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

65

Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ +25°C: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը +10°C է (հաշվարկը կատարել 5°C-ով).
Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

66

Ինչքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 3 տ նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5):

67

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38° , արլ. ե. 147° : Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

68

Երկրի նավթի պաշարները կազմում են 6,8 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 170 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:

69

Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արտահանման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:
- 2) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 3) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 5) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
- 6) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:

70

ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Խոզաբուծությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:
- 2) Թռչնաբուծական ֆարրիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 3) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 4) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
- 5) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված:
- 6) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը: